



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ԵՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀՈՎՍԵՓՅԱՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ,
ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Ա. Էջմիածին ուրախ է և հպարտ, որ իր ամենահարազատ զավակներեն մեկուն ծննդյան հարյուրամյակը կտոնէք դուք այս տարի, հեռավոր Ատլանտյանի ափերուն:

Հայկական Ղարաբաղի լեռներեն իջալ ան, և մտալ վանք: Աշակերտեց Մայր Աթոռիս Գևորգյան ճեմարանեն ներս: Անոր հոգին ջերմացալ սուրբ հավատքով, միտքը լեցվեցալ լույսով. և անոր կյանքը դարձալ վսեմ առաքելություն մը՝ եկեղեցիի, մշակույթի և հայրենիքի ծառայության ճանապարհի վրա:

Մենք բոլորս այսպես ճանչցանք երանաշնորհ Հայրապետը՝ Գարեգին Հովսեփյանց, որ երկար տարիներ, իր հոգիին լույսը բաշխեց իր ժողովուրդին՝ ա. Էջմիածնի սեղանեն և ճեմարանի ամբիոնեն, որ հայրենիքի վտանգի պահուն, խաչ ի ձեռին կովի դաշտ իջալ, և եղալ Սարդարաբաղի հաղթանակը կերտողներեն մին, որ երկար տարիներ պեղեց մեր անցյալը և լույս աշխարհ բերալ մեր հին մշակույթի շատ գանձեր, որ կենդանարար աշխատանք ծախլալեց Ամերիկայի մեջ, հավատքի և հայրենասիրական գործի մղելով զձեզ, և որ իր կյանքի վերջին տարիներուն Տաճն Կիլիկիո Աթոռը սրգասավորեց սուրբ Էջմիածնի շունչով:

Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց այն դեմքերեն է որ ավելի ու ավելի կայծառաճա, ինչքան տարիներ անցնին: Ան, այսօր հիշատակ չէ միայն, այլ մանավանդ ներշնչարան և առաջնորդող ոգի: Ան կապրի ոչ միայն իր մնայուն գործերով և վատակով, այլ նաև այն ամենով, որ ինք բաշխեց բո-

լոր անոնց, որոնք զինք տեսան, լսեցին ու հոգեկան հաղորդակցության մեջ
 եղան իր լուսեղեն էության հետ:

Գարեգին Հովսեփյանց համակ ոգեկանություն էր: Միտքը պայծառ էր
 բյուրեղի նման. նկարագիրը՝ անկեղծ, միակտուր և տոկուն. հավատավոր ու
 հավատարիմ իր կոչումին. համատրեմ լավատես ու անտրտունջ աշխատող:

Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց մանավանդ մեծ եղավ և վարակիչ,
 իր ամբողջական նվիրումով դեպի իր հարազատ ժողովուրդը, իր անասկարկ
 սիրով դեպի իր մայր երկիրը, նույնքան հարազատ: Աշխարհը համայն, ան
 կտեսներ ու կապրեր՝ Հայաստանի մեջ, Հայաստանով, Հայաստանի համար:

Մենք, այսօրվան հոգևորականներս մեր տկարությանց և տարակու-
 սանքներու կամ շփոթությանց պահերուն, մեր հայացքը դարձնենք մեր լու-
 սաբնակ հայրերուն հիշատակին ու վաստակին, գտնելու համար մեր կյանքի
 և առաքելության ճշմարիտ ու ապահով ուղին:

Այդպիսի հայր մը եղավ ու պիտի մնա մեզի ամենուս համար՝ Գարեգին
 կաթողիկոս Հովսեփյանց, ծառան Աստուծո և հայ ժողովուրդին:

Օրհնություն և լույս իր հոգիին:

«Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք նոցա» (Եբր.
 ԺԳ 17): Ամէն:

12 սեպտեմբեր 1969 թ.

